օրէնսդրութիւն, ենթակայ են պարսիկ խաների կամայակա-նութիւններին, որոնք բացի օրինական հարկից առնում են նաև ապօրինի հարկեր, այսպէս՝ 144 բեռ եօնջա, 100 հաւ, 1000 հաւկիթ, 6 ոչխար, 100 բեռ յարդ, 100 լիտր վառելիք (աթար), բացի այդ գիւղացիներն այս տարի (1918 թ.) պահում էին Մամթաղի աղայի 100 ոչխարները։

Այսպիսի պայմաններում հասկանալի է սիրելիս, խեղճ գիւղացիութեան դրութիւնը. շնորհիւ այդ հարստահարու-թիւնների՝ նրանք օրըստօրէ տնտեսապէս քայքայւում են և դիմում դէպի աղքատութիւն։

Հողը հերկում են արօրով։ Ցանում են նոյն հացաբոյ-սերն և այլ ցանովի խոտեր։

Գիւղն ունի մի եկեղեցի՝ Ս. Գէորգ անունով և մի խա-լիֆայական գպրոց, որը գտնւում է եկեղեցու վերի յար-կում. դա փոքրիկ մի սենեակ է, ուր գետնի վրայ, գլխարկ-ները գլուխներին՝ ծալապատիկ նստած են մօտ 30 աշա-կերտներ և որոնք մի տիրացուի «ուսուցչութեամբ» կարդում են կրօն, մայրենի լեզու, ժամագիրք և Նոր-Կտակարան առանց հասկանալու նրանց բովանդակութիւնը։ Գիւղացի-ների մեծամասնութիւնը տգէտ է։

Գիւղում կայ նաև մի ջրաղաց։

Այս գիւղից դէպի արևմուտք, 20 քայլ հեռաւորութեան վրայ գտնւում է առիւծանման մի սպիտակ քար։ Ամուլ կանայք ուխտի են գալիս այստեղ, քարի անցքով երեք ան-գամ անցնում, որպէսզի երեխայ ունենան . . .

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	100
2	Չունևոր	38
3	Միջակ	300
4	Ունևոր	100
5	Հարուստ	100
	Ընդամենը	638